2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2013 թվականի հունվար-հուլիս ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 604.6 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 553.4 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 76.8%-ով և 71.5%-ով ապահովել են ՀՀ կառավարության իննամսյա ծրագրի կատարումը: Հարկ է նշել, որ ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում ինն ամիսների ընթացքում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Մասնավորապես՝ արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 15 մլրդ դրամ կամ ինն ամիսների համար նախատեսված մուտքերի 62.3%-ը, իսկ ծախսերը՝ 13.7 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 51.9%-ը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 56.2%-ով, ծախսերի գծով՝ 51.9%-ով:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

2012 թվականի հունվար-հուլիս ամիսների համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 19.6%-ով կամ 99 մլրդ դրամով, ինչը հիմնականում ապահովվել է հարկային եկամուտների աճի հաշվին:

Պետական բյուջեի եկամուտների 94.3%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 4.8%-ը՝ այլ եկամուտների, 0.9%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին:

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 570.2 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են իննամսյա ծրագրի 76.6%-ը: 2012 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 19.6%-ով կամ 93.5 մլրդ դրամով, ինչը մեծ մասամբ պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, բնապահպանական ու բնօգտագործման վճարների և մաքսատուրքի աճով: Բացի այդ, 2013 թվականից հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությամբ նախկինում սահմանված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների փոխարեն ներդրվել է մեկ միասնական՝ եկամտային հարկ, որի գծով անցած ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 131.9 մլրդ դրամ: 2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա պարտավորությունների գծով ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 14.8 մլրդ դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ և 6.4 մլրդ դրամ եկամտահարկ: Եկամտային հարկից ստացված մուտքերը՝ հաշվետու ժամանակահատվածում մուտքագրված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հետ միասին (որոնք մուտքագրվել են նախորդ տարվա պարտավորությունների գծով) 24.7%-ով (շուրջ 30.4 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մուտքագրված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մուտքերը: 2013 թվականից ներդրվել է ևս մեկ նոր հարկատեսակ՝ շրջանառության հարկը, որի գծով հունվար-հուլիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 6.7 մլրդ դրամ:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 40.5%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է շուրջ 231.2 մլրդ դրամ և 20%-ով կամ 38.5 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը, ինչը հիմնականում ապահովվել է ներմուծումից ստացված եկամուտների հաշվին:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 4.6%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 26 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 18.7 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 7.2 մլրդ դրամ: Տեղական արտադրության ենթաակցիզային ապրանքների հարկումից

ստացված մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 16.8%-ով, իսկ ներմուծվող ապրանքների գծով մուտքերը՝ ավելացել 15.4%-ով. արդյունքում ակցիզային հարկի ընդհանուր մուտքերն աճել են 4.2%-ով կամ ավելի քան 1 մլրդ դրամով:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 13.2%-ը ձևավորվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 75 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 4.3%-ով կամ շուրջ 3.1 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 28.6 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 5%-ը և 27.6%-ով կամ 6.2 մլրդ դրամով գերազանցել 2012 թվականի համապատասխան ցուցանիշը:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 14.3 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով իննամսյա ծրագրի 77.3%-ը և ապահովելով ՀՀ պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 2.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 10.3%-ով կամ 1.3 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են ավելի քան 6.7 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 1.2%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա հունվար-հուլիս ամիսների համեմատ նվազել է 28.9%-ով՝ հիմնականում պայմանավորված «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնց համաձայն գործունեության մի քանի տեսակներ դուրս են բերվել հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների ցանկից:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 20.6 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ՝ կազմելով հարկերի և տուրքերի 3.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 54.3%-ով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 8 մլրդ դրամի այլ հարկեր՝ կազմելով հարկերի և տուրքերի 1.4%-ը: Մասնավորապես՝ շուրջ 4 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 19%-ով կամ 638.6 մլն դրամով: Ավելի քան 2.1 մլրդ դրամ է մուտքագրվել ճանապարհային վճարների գծով, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 48.1%-ով կամ 694.4 մլն դրամով: 45 մլն դրամ են կազմել ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 404.7 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 392.3 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 324.5 մլն դրամ՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմապիտակների ձեռք բերման վճարները, 4.7 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, և 778.7 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա հունվար-հուլիս ամիսների համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 28.5%-ով կամ շուրջ 1.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ճանապարհային և արտոնագրային վճարների աճով և մի շարք ըմպելիքների դրոշմավորման պահանջի սահմանման հետ կապված՝ դրոշմապիտակների ձեռք բերման դիմաց կատարված վճարումներով:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 5.3 մլրդ դրամ դրամաշնորհներ՝ կազմելով իննամսյա ծրագրով նախատեսված դրամաշնորհների 66.7%-ը և 2.5 անգամ (3.2 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Նշված գումարից ավելի քան 2.6 մլրդ դրամը Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար տրամադրված դրամաշնորհն է, որը ստացվել է նախատեսված ծավալով: Ավելի քան 1 մլրդ դրամ է ստացվել պարենային ապահովության ծրագրի շրջանակներում, որը 2013 թվականի պետական բյուջեում նախատեսված չէր: 1.6 մլրդ դրամ է մուտքագրվել ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով իննամսյա ծրագրով նախատեսվածի 75.2%-ը: Ավելի քան 3.1 մլրդ դրամ դրամաշնորհ է նախատեսվել Եվրոպական հարևանության շրջանակներում 2010թ. Ազգային գործողությունների ծրագրով

(աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցիացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին) նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար, որը հունվար-հուլիս ժամանակահատվածում չի ստացվել:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 29.2 մլրդ դրամ՝ 16.4%-ով զիջելով իննամսյա ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից 12.6 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց իննամսյա ծրագիրը կատարվել է 63.2%-ով: Առանց արտաբյուջետային միջոցների՝ այլ եկամուտների իննամսյա ծրագիրը կատարվել է 110.9%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի այլ եկամուտներն աճել են 8.8%-ով կամ 2.4 մլրդ դրամով:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 59.3 մլն դրամ, որը 2013 թվականի պետական բյուջեով չէր նախատեսվել:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից ստացվել է 430.5 մլն դրամ՝ կազմելով իննամսյա ծրագրի 98.5%-ը:

Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են շուրջ 3.3 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 4.5 անգամ գերազանցելով իննամսյա ծրագրային ցուցանիշը և 12.8%-ով՝ նախորդ տարվա մուտքերը:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումների դիմաց ստացվել են 83.2 մլն դրամ շահաբաժիններ՝ կազմելով իննամսյա ծրագրի 14.9%-ը և 27.3%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 3.1 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 83.9%-ով ապահովելով իննամսյա ծրագրային ցուցանիշը և 12.9%-ով զիջելով 2012 թվականի նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 5.2 մլրդ դրամ է մուտքագրվել իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից՝ կազմելով իննամսյա

ծրագրով կանխատեսված ցուցանիշի 70.5%-ը և 26.6%-ով կամ 1.1 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները կազմել են ավելի քան 15.1 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 70.3%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են շուրջ 2.1 մլն դրամ ոչ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով իննամսյա ծրագրի 2%-ը:

Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ՝ 4.2 անգամ գերազանցելով իննամսյա ծրագրով կանխատեսված ցուցանիշը:

<u>ՀՀ պետական բյուջեի ծախսերը</u>

2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 7.1%-ով կամ շուրջ 36.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 515.8 մլրդ դրամ՝ 73.7%-ով ապահովելով իննամսյա ծրագրի կատարումը: Նախորդ տարվա հունվար-հուլիս ամիսների համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 7.5%-ով կամ 35.9 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերից շուրջ 53.4 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը, որը կազմել է իննամսյա ծրագրի 73.9%-ը և 18.1%-ով (8.2 մլրդ դրամով) գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով զինծառայողների դրամական եկամուտները հանվել են նախկինում նվազեցվող եկամուտներ համարվող եկամուտների ցանկից, և սահմանվել է, որ զինծառայողներին վճարվող դրամական եկամուտները հարկվում են եկամտային հարկով՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով 2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջեից օգտագործվել է շուրջ 117.6 մլրդ դրամ, որը կազմել է իննամսյա ծրագրի 74.0%-ը և 4.1%-ով (4.6 մլրդ դրամով) գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված նյութերի ձեռք բերման ծախսերի աճով:

Պետական պարտքի սպասարկմանը հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 24.5 մլրդ դրամ՝ կազմելով իննամսյա ծրագրի 70.9%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից շուրջ 15.0 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 9.6 մլրդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 12.8%-ով կամ 2.8 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 15.4 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով իննամսյա ծրագրի 79.8%-ը և 31.7%-ով (3.7 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 59.8 մլրդ դրամ դրամաշնորհներ, որից 58.8 մլրդ դրամը՝ պետական հատվածի այլ մակարդակներին, 972.4 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 21.1 մլրդ դրամ դոտացիաներ, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 11.6%-ով: Դրամաշնորհների իննամսյա ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 74.1%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 5%-ով կամ 2.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների աճով:

Ընթացիկ ծախսերի 33.3%-ը՝ 171.8 մլրդ դրամ, ուղղվել է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարմանը՝ ապահովելով ներկայացված բոլոր պարտավորությունների կատարումը և արձանագրելով իննամսյա ծրագրի 75.8% կատարողական: Մասնավորապես՝ 115.2 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 56.7 մլրդ դրամ՝ նպաստները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստների և կենսաթոշակների ծախսերն ավելացել են 3.9%-ով կամ 6.4 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 73.2 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով իննամսյա ծրագրի 68.2%-ը և 11.1%-ով կամ 7.3 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին կազմել են 37.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 50.4%-ը: Մասնավորապես՝ 38.3 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնց իննամսյա ծրագիրը կատարվել է 51.0%-ով: Նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 2.9%-ով կամ 1.1 մլրդ դրամով: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքագրվել է 684.2 մլն դրամ՝ 73.6%-ով գերազանցելով իննամսյա ծրագրով կանխատեսված ցուցանիշը և 44.9%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն արձանագրել է 2.3% (854.6 մլն դրամով) աճ՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների ծախսերի աճով:

<u>ՀՀ պետական բյուջեի հավելուրդը</u>

2013 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 51.1 մլրդ դրամ հավելուրդով (առանց արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերը հաշվի առնելու)՝ իննամսյա ծրագրով նախատեսված 12.4 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ ներքին ֆինանսավորումը կազմել է 7.0 մլրդ դրամ, արտաքին ֆինանսավորումը՝ -58.2 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում բյուջետային ելքերի համեմատ մուտքերի առավել բարձր կատարողականի արդյունքում հավելուրդի ներքին աղբյուրներում ձևավորված ազատ միջոցներն ավելացել են 9.6 մլրդ դրամով՝ իննամսյա ծրագրով նախատեսված 37.4 մլրդ դրամ օգտագործման փոխարեն:

Ներքին աղբյուրներում շուրջ 9.4 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները, -2.4 մլրդ դրամ՝ ֆինանսական զուտ ակտիվները: Ներքին փոխառու միջոցներում 10.4 մլրդ դրամ են կազմել գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը: 211.9 մլն դրամ ուղղվել է պետական բյուջեից տրամադրված մուրհակների մարմանը: Նախատեսված ծավալով՝ 811 մլն դրամի չափով, կատարվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարումը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 4.8 մլրդ դրամի վարկեր կամ իննամսյա ծրագրով նախատեսված ծավալի 51.6%-ը: Նշված գումարից շուրջ 1.4 մլրդ դրամը տրամադրվել է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից, որից 949 մլն դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը և 415.6 մլն դրամ՝ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին: Շուրջ 12.1 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -58.2 մլրդ դրամ: Արտաքին աղբյուրներում -33.3 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները՝ 72.1%-ով ապահովելով իննամսյա ծրագիրը: Մասնավորապես՝ 33.4 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից շուրջ 4.3 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 17.9 մլրդ դրամը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, 284.7 մլն դրամը՝ ԳԶՄՀ, 202.8 մլն դրամը՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի, 269.7 մլն դրամը՝ ՎԶԵԲ նկատմամբ ունեցած պարտքի մարմանը: 466.7 մլն դրամ է տրամադրվել ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 650.9 մլն դրամ՝ Ճապոնիայի, 135.1 մլն դրամ՝ Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամի, 669.2 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության, 8.5 մլրդ դրամ՝ ՌԴ, 31 մլն դրամ՝ Ֆրանսիայի նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Հաշվետու ժամանակահատվածում -24.8 մլրդ դրամ են կազմել ֆինանսական զուտ ակտիվները՝ ապահովելով իննամսյա ծրագրի 79.9% կատարողական, որից ավելի քան 22.9 մլրդ դրամը հատկացվել է ԼՂՀ-ին՝ որպես միջպետական վարկ: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով վճարվել է իննամսյա ծրագրով նախատեսված վճարումների 64.5%-ը՝ կազմելով 172.6 մլն դրամ: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 1.0 մլրդ դրամ՝ կազմելով իննամսյա ծրագրի 62.2%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 1.1 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: